ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 2551-Ա « 12 » հուլիսի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 23-Ի Հ.2764-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության հ.Ն/48825-23 գրությունը.

1.Երևանի քաղաքապետի 2023 թվականի օգոստոսի 23-ի «Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Բաբաջանյան փողոց, հ.108/3 հասցեում սեփականության իրավունքով Անուշ Մերուժանի Գրիգորյանին պատկանող և Ա.Բաբաջանյան փողոց, հ.108/13 հասցեում Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ իրականացված կառույցներն օրինականացնելու մասին» հ.2764-Ա որոշման /այսուհետ՝ Որոշում/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագրում՝ «հ.108/13 հասցեում» բառերը փոխարինել «հ.108/13 և հ.108/14 հասցեներում» բառերով.

2) Որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող 90.46քմ (74.62քմ մակերեսով հողամասի համար՝ Ա.Բաբաջանյան փողոց հ.108/13, 15.84քմ մակերեսով հողամասի համար՝ Ա.Բաբաջանյան փողոց հ.108/14 հասցեները) ընդհանուր մակերեսով (հիմք՝ «ԿԱՆՈՆ ԱՐԵԱ» ՍՊԸ-ի կողմից տրված չափագրությունը) հողամասում կառուցված՝ հասարակական շինություն գործառական նշանակությամբ ինքնակամ կառույցները (ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված չափագրման տվյալների մուտքագրման ծածկագրեր հ.2022OMHYUN, հ.2022OHA4I8) համարել Երևան քաղաքի սեփականությունը և այն ճանաչել օրինական (կցվում են հողամասի և շինությունների հատակագծերը):».

3) Որոշման 4-րդ կետում՝ «90.68քմ» բառերը փոխարինել «90.46քմ» բառերով:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ